«Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ճյուղերի)» մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն
«Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ճյուղերի)» մագիստրոսական ծրագիրը նպատակաուղղված է կազմակերպությունների հաշվապահական ծառայությունը ղեկավարող պաշտոնի (գլխավոր հաշվապահի) համար անհրաժեշտ ունակությունների ձևավորմանը: Գլխավոր հաշվապահի աշխատանքը պահաջնում է գիտելիքների, հմտությունների և կարողությունների բազմաշերտ իմացություններ, որոնք ունեն տնտեսության տարբեր ճյուղերի համար ոլորտային առանձնահատկություններ: Առավել քան երբևէ, կազմակերպությունների համար հաշվապահական հաշվառման պատշաճ վարումը պահանջ է և բիզնեսի կողմից, և հաշվետվողական տեղեկատվության օգտագործողների կողմից: Սույն ծրագիրը միտված է իր շրջանավարտներին փոխանցել այնպիսի իմացություններ, որոնց միջոցով շրջանավարտը մուտք է գործելու առավել բարձր պահանջված և վարձատրվող աշխատաշուկա՝ պատրաստ լինելով հանձն առնել կազմակերպության գլխավոր հաշվապահի կամ հաշվապահական ծառայության ղեկավարի պաշտոնը: Շրջանավարտին շնորհվում է «Տնտեսագիտության մագիստրոս» որակավորում: Ծրագրի մշակման մեջ հաշվի է առնվել ինչպես գլխավոր հաշվապահի ներպետական լիցենզավորման համար անհրաժեշտ գիտելիքների շրջանակը, այնպես էլ միջազգային որակավորման համար բարձր նշաձողից ելնելով իմացությունները: Ծրագրի տևողությունը 1,5 տարի է, դասապրոցեսը նախատեսվում է իրականացնել երեկոյան ժամերին: Մասնագիտական դասընթացներին զուգահեռ կամ դասընթացից հետո մագիստրոսը համապատասխան փորձառություն պետք է անցնի ոլորտային առաջատար կազմակերպություններում՝ ծանոթանալով այդ դասընթացի շրջանակներում ուսումնասիրված նյութի գործնական կիրառական ասպեկտների հետ: Ծրագրի շրջանակներում որպես դասախոսներ ներգրավվում են ֆինանսական հաշվառման ամբիոնի փորձառու դասախոսները և հրավիրյալ դասախոսները, նախատեսվում են վարպետաց դասեր նաև ոլորտի լավագույն մասնագետների կողմից՝ շեշտը դնելով փորձառության փոխանցման վրա: Ուսման վճարը մեկ տարվա համար 700.000 ՀՀ դրամ է:
Մասնագիտության նկարագիր
«Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ճյուղերի)» մագիստրոսական

ծրագիրը բացառիկ հնարավորություն է ընձեռում տիրապետելու հաշվապահական հաշվառման ամենաբարդ հիմնախնդիրներին և դրանց լուծման արդի գործիքակազմին, որը շերտավորվում է ըստ տնտեսության տարբեր ճյուղերի: Սույն մասնագիտության կրթական ծրագիրը իրական ոլորտային առաջատարների «դարբնոց» է, որը ավարտելուց հետո շրջանավարտները ֆինանսահաշվային ոլորտում ղեկավար կարգավիճակի համապատասխան իմացություն են ստանալու՝ կրելով հաշվապահության գիտական միտքը և լավագույն մասնագետների փորձառությունը:

Սույն մագիստրոսական ծրագրի հիմքում այն թեզն է, որ այն ավարտողը պետք է հաջորդիվ պատրաստ լինի ոչ միայն վարել կազմակերպության հաշվապահական հաշվառումը, այլև առաջնորդել կազմակերպության հաշվապահական համակարգը, ինչպես նաև պատրաստ լինել լիցենզավորվելու որպես գլխավոր հաշվապահ ներպետական միջավայրում:

Մագիստրոսական ծրագրի շրջանակում իմացություններ են փոխանցվում մագիստրանտներին նաև հարակից ոլորտներից՝ ուժեղացնելով և ամրապնդելով մասնագիտական գիտելիքների պաշարները: Ժամանակակից հաշվապահությունը անհնար է պատկերացնել առանց ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի կամ տնտեսական իրավունքի իմացության կամ գործարար անգլերենի:

Այսպես, թվենք այն դասընթացները, որոնք ներառված են կրթական ծրագրում՝

- Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանումը ըստ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (գիտահետազոտական աշխատանք)
- Տնտեսական իրավունք
- Խորացված հարկային հաշվառում
- Հաշվապահությունը մանրածախ առևտրում
- Հաշվապահական փորձաքննություն
- Հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները բանկերում (գիտահետազոտական աշխատանք)
- Համախմբված ֆինանսական հաշվետվություն
- Զուտ ակտիվների արժեքի գնահատման հաշվապահական հաշվառում
- Հարկային վարչարարություն
- Գործարար անգլերեն
- Գիտական հետազոտության մեթոդաբանություն

Աշխատանքի հնարավորություններ

Ներկայիս աշխատաշուկայում ամենաբարձր վարձատրվող աշխատանքներից է գլխավոր հաշվապահի աշխատանքը՝ հաշվի առնելով նաև, որ բոլոր կազմակերպությունները պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում, ակներև է, որ յուրաչանյուր կազմակերպություն ունի պատշաճ մասնագիտական որակների տիրապետող գլխավոր հաշվապահի կարիք: Հետևապես, սույն

մագիստրոսական ծրագրի ավարտից հետո շրջանավարտների առջև բացվում է մասնագիտական առաջխաղացման և ֆինանսահաշվային ոլորտում ղեկավար պաշտոններ ստանձնելու լիակատար հնարավորություն։